

ИСТОРИЯ

Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական առաքելությունն ԱՄՆ (1919 թ. վերջ – 1920 թ. ամառ)

Ղամբարյան Արմենուհի Վ.

ս.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
Ընդհանուր պատմության բաժնի ավագ գիտաշխատող (Երևան, ՀՀ)
vanarmin@mail.ru

ՀՏԳ՝ 947.925+32(73); EDN: JNKOPM

Հանգուցաբառեր՝ Հայաստանի Հանրապետություն, ԱՄՆ, Բագրատունի, Անդրանիկ, առաքելություն, ռազմական, բանաձև, օգնություն

Military Mission of the First Republic of Armenia in the USA (late 1919 - summer 1920)

Ghambaryan Armenuhi V.

Candidate of Sciences in History, Associate Professor.
Senior Researcher at the NAS RA Institute of History (Yerevan, RA)
vanarmin@mail.ru

Abstract. In the summer of 1919, a military mission of the Republic of Armenia headed by General A. Bagratuni was formed in Paris by two Armenian Delegations. Commander Andranik was included in the mission as a special representative of the National delegation. At the end of November 1919, on behalf of the United Armenia, the mission went to the United States with a request for military assistance.

The mission's activities in the United States for six months were not crowned with success. The US administration refused to provide the Republic of Armenia with military assistance - weapons, ammunition and troops, because since the end of 1919, the US Senate rejected the charter and mandate of the League of Nations. This meant that the Armenian problems were no longer within the political interests of the United States.

Keywords: Republic of Armenia, USA, Bagratuni, Andranik, mission, military, resolution, assistance

Военная миссия Первой Республики Армения в США (конец 1919 г. - лето 1920 г.)

Гамбарян Арменуи В.

к. и. н., доцент, старший научный сотрудник Институт истории НАН РА (Ереван, РА)
vanarmin@mail.ru

Аннотация. Летом 1919 г. в Париже двумя армянскими Делегациями была сформирована военная миссия Республики Армения во главе с генералом А. Багратуни. В качестве специального представителя Национальной делегации в состав миссии был включен полководец Андраник. В конце ноября 1919 г. от имени Объединенной Армении миссия отправилась в США с просьбой о военной помощи.

Деятельность миссии в течение полугода в США не увенчалась успехом. Американская администрация отказалась предоставить Республике Армения военную помощь - оружие, боеприпасы и войска, поскольку с конца 1919 г. Сенат США отклонил устав и мандат Лиги Наций. Это означало, что армянские проблемы больше не входили в круг политических интересов США.

Ключевые слова: Республика Армения, США, Багратуни, Андраник, миссия, военная, резолюция, помощь

Նախաբան:

1919 թ. մայիսին, երբ տոնվում էր Հայաստանի Առաջին Հանրապետության առաջին տարեդարձը և արվեց Միացյալ և անկախ Հայաստանի հայտարարությունը, երիտասարդ պետության վիճակը տակավին հուսադրող չէր: Նախ՝ Միացյալ Հայաստանի կյանքի կոչվելն ինքնին՝ լոկ հռչակագրով հնարավոր չէր: Վերջինիս գործնականում կայանալու հարցը դեռևս քննարկման փուլում էր Փարիզի Խաղաղության վեհաժողովում՝ Դաշնակից պետությունների կողմից: Բացի դա՝ թեպետ Հանրապետության բնակչությունը՝ շնորհիվ վերջապես հասած ամերիկյան հումանիտար օգնության, դուրս էր գալիս սովահար ճնշան ու գարնան առաջին

ամիսների սարսափելի վիճակից, դրությունը երկրում շարունակում էր մնալ ծանր թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական տեսանկյուններից: Հանրապետությունը լուրջ աջակցության կարիք ուներ: Հայությունը խնդրո առարկա ժամանակաշրջանում կրկին իր հույսը կապում էր Մեծ տերությունների՝ առավելապես ԱՄՆ-ի հետ: Արդյունքում Հանրապետության խորհրդարանի կողմից հաստատվեց օրինագիծ [5, էջ167]՝ համաձայն որի Եվրոպա և ԱՄՆ մեկնելու՝ վերջիններիս կառավարություններից հումանիտար օգնություն խնդրելու նպատակով ստեղծվում է հատուկ քաղաքացիական առաքելություն [31, էջ 254-261]:

Սույն առաքելությունը, ՀՀ նախկին վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ, 1919 թ. հունիսի կեսին հասնում է Փարիզ և ավելի քան երեք ամիս ակտիվ գործունեություն ծավալում ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում: Սակայն ՀՀ պատվիրակությունը եվրոպական երկրներում ֆինանսական աջակցություն ստանալու առումով զգալի արդյունքների չհասավ: Ելնելով ստեղծված հանգամանքներից՝ Փարիզում Հայկական Ազգային Պատվիրակության և Խաղաղության վեհաժողովի Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից որոշում է կայացվում դիմել ամերիկյան կառավարությանը՝ հենց ԱՄՆ-ում [1, գ. 290, թթ. 55-60]: Ինչպես նշում էր Ավ. Ահարոնյանը՝ ծանրության կենտրոնը փոխվում էր Ամերիկա: Մեյտենբերի 10-ին ՀՀ վարչապետ Ա. Խատիսյանին ուղարկած նամակում նա գրում էր, որ Լոնդոնում գտնվող Քաջազնունուց ստացված լուրերը վատատեսական էին և որ. «Առհասարակ մեր բոլոր փորձերից հետո դժվար է հույս ունենալ փոխառության կամ ֆինանսական լուրջ օգնության որևէ պետության կողմից, քանի որ մեր պետությունը պաշտոնապես անանչված չէ: Սա մի դժբախտություն է, որից չենք ազատվում: Քաջազնունին իր ընկերներով կվերադառնա Փարիզ այս սեպտեմբերի 25-ին՝ Ամերիկա մեկնելու համար» [1, գ. 290, թթ. 43-44; 1, գ. 355, մաս 1, թթ. 218-219]:

Ուստի՝ Հ. Քաջազնունու գլխավորությամբ քաղաքացիական առաքելությունը 1919 թ. հոկտեմբերի 1-ին Փարիզից մեկնում է ԱՄՆ: Այդ հանձնախմբից բացի՝ կազմավորվում և ավելի ուշ ԱՄՆ է ուղարկվում նաև ռազմական առաքելություն:

Հայաստանի Հանրապետության ռազմական առաքելության կազմավորումը Փարիզում

ԱՄՆ-ը մեկնելուց առաջ, քաղաքացիական առաքելության հանձնարարականների հստակեցման ընթացքում պարզ է դառնում, որ, Հանրապետության համար ստեղծված իրավիճակից ելնելով, անհրաժեշտ էր Միացյալ Նահանգներին դիմել նաև քաղաքական և ռազմական բնույթի օժանդակություն ստանալու խնդրանքով, քանի որ եվրոպական դաշնակիցների կողմից մերժվել էին նաև ՀՀ ռազմական օգնության դիմումները [33, էջ 98]:

Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ՝ ՀՀ պատվիրակությունն առաջարկում է բոլոր տնտեսական, քաղաքական և ռազմական հարցերի հետ կապված հանձնարարականները բարձրացնել Հ. Քաջազնունու գլխավորությամբ մեկ ընդհանուր առաքելության շրջանակներում: Այս առաջարկությանը համաձայն չէր Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար

փաշան, ով ցանկանում էր նախ՝ առաջնային դեր խաղալ ԱՄՆ ուղարկվող առաքելության գործում և երկրորդ՝ տարանջտել քաղաքացիական և ռազմական խնդիրներն ու արդյունքում երկու անջատ պատվիրակություն ուղարկել Միացյալ Նահանգներ: Չկարողանալով գերակշիռ դեր ապահովել քաղաքացիական պատվիրակության կազմում, որը գլխավորեց Հ. Քաջազնունին, Պողոս Նուբարը՝ ի հակակշիռ Հայաստանի Հանրապետության առաքելության, ձևավորեց իր անձնական ինքնուրույն պատվիրակությունն՝ ի դեմս պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյանի: Վերջինս ներկայացնելով Ազգային պատվիրակությունը, փաստացի, արտահայտելու էր Պողոս Նուբարի շահերը ԱՄՆ-ում:

Այսպիսով Ֆրանսիայից ԱՄՆ մեկնող Քաջազնունու գլխավորած պատվիրակության կազմում այն անձինք էին, որոնց թեկնածությունները հաստատվել էին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դեռևս 1919 թ. գարնանը. Երևանում: Դրանք էին՝ կապիտան Սուրեն Մելիքյանը՝ իբրև նախագահի քարտուղար, տնտեսական խորհրդականներ՝ ֆինանսների նախկին նախարար Արտաշես Էնֆիաջյանն ու գյուղատնտես Արտեմ Փիրայանը: Առաքելությանը միացել էր Փարիզում ՀՀ պատվիրակություն անդամ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), որը նշանակվել էր ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ: Հատկանշական է, որ տնտեսական հարցերից բացի՝ քաղաքացիական առաքելությունը լիազորվել էր նաև քաղաքական խնդիրների լուծումներն ապահովելու իրավունքով: (Քաղաքացիական առաքելության մասին տե՛ս [31, էջ 134-149]):

Այսպիսով՝ բաց էր մնում միայն ռազմական ոլորտը ներկայացնելու հարցը, որը լրացնելու նպատակով Հ. Քաջազնունին փորձեց իր պատվիրակության մեջ՝ որպես զինվորական կցորդ ընդգրկել Փարիզի վեհաժողովում ՀՀ պատվիրակության անդամ, ռազմական հարցերով խորհրդատու գեներալ Հակոբ Բագրատունուն: Սակայն Բագրատունին աննպատակահարմար էր համարել լոկ խորհրդականի պաշտոնով Ամերիկա մեկնելը, գտնելով, որ դա պատշաճ չէ իր դիրքին [10, էջ 599]: Ի պատասխան Քաջազնունուն՝ նա առաջարկում է ստեղծել և Միացյալ Նահանգներ ուղարկել քաղաքացիական և տնտեսական հարցերով զբաղվող հանձնախումբից զատ մեկ այլ՝ զինվորական հանձնախումբ՝ իր և զորավար Անդրանիկի մասնակցությամբ, որն էլ կզբաղվեր ռազմական խնդիրներով: Ի տարբերություն ՀՀ պատվիրակության, որը կողմնակից էր միայն մեկ պատվիրակության գործադրման, իսկ ռազմական հանձնախումբի ստեղծման դեպքում՝ վերջինը ինչ-որ կերպ կապել Հ.

Քաջագունու պատվիրակության հետ, Պողոս Նուբարը հավանություն էր տալիս գոր. Բագրատունու մոտեցմանը և հանդես գալիս մեկ այլ տարբերակով: Նա առաջարկում է, որպեսզի գեներալ Հ. Բագրատունին և գոր. Անդրանիկը Միացյալ Նահանգների կառավարության համաձայնությամբ ԱՄՆ մեկնեն ոչ թե իբրև Հայաստանի Հանրապետության, այլ Միացյալ Հայաստանի, այսինքն՝ ողջ հայության ներկայացուցիչներ, և այնտեղ կատարեն անհրաժեշտ զինվորական կարգադրություններ [10, էջ 600]: Քանի որ գեներալ Բագրատունին ընդունում է այս առաջարկը, Պողոս Նուբարը հավաստում է, որ Ազգային Պատվիրակությունը կարելի է կանխ այդ ձեռնարկի հաջողության համար [2, գ. 65, թ. 2]:

Եվ իսկապես, Պողոս Նուբարի կազմակերպած համատեղ քննարկման ժամանակ նա հասնում է նրան, որ Ա. Ահարոնյանը հավանություն է տալիս նշված ձեռնարկին: Արդյունքում 1919 թ. օգոստոսի 6-ին Փարիզում հայկական երկու պատվիրակությունների նախագահներ Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը հավատարմագիր են հանձնում Հայաստանի զինվորական բարձր կոմիսար Հակոբ Բագրատունուն, որտեղ նշված էր, որ զորավարը Միացյալ Հայաստանի պատվիրակության կողմից նշանակվել է ԱՄՆ-ում հայկական զինվորական առաքելության ղեկավար: Հավատարմագրում նշվում էր. «Մեր կողմից գորավար Բագրատունուն հանձնարարված է Միացյալ Նահանգների կառավարությանը ներկայացնել Հայաստանի զինվորական կարիքները և անհրաժեշտ օգնություն ստանալ հանրապետության արդի դրությանը համապատասխան» [2, գ. 63, թ. 3]: Հ. Բագրատունու հավատարմագիրը նրան լիազորում էր ամերիկյան ռազմական օժանդակություն հայցել, արտոնության ղեկավարում ամերիկահայերի արշավագործ հավաքել և հայկական բանակի վերակազմակերպման հայ հրահանգիչներ ու տեխնիկական աշխատողներ հավաքագրել [8, էջ 460]:

Նշենք, որ զինվորական առաքելության մեջ ընդգրկված՝ ոչ թե որպես շարքային անդամ, այլ Ազգային պատվիրակության հատուկ ներկայացուցիչ, Անդրանիկի հավատարմագիրն ստորագրվեց շատ ավելի ուշ՝ Պողոս Նուբարի վճռականության արդյունքում, որը պնդում էր, որ Ազգային պատվիրակությունն Անդրանիկից բացի ուրիշ թեկնածու չունի: Վերապահություններն Անդրանիկի թեկնածության հետ կապված բխում էին վերջինիս անհաշտ դիրքորոշումից՝ հանդեպ ՀՀ կառավարության, ինչպես նաև գոր. Բագրատունու անձնական ամբիջիոզ մոտեցումներից: Բագրատունին՝ առանձնապես ոգևորված չլինելով առաքելության կազմում Անդրանիկին ընդգրկելու

փաստով, կողմ չէր նաև հանձնախմբում վերջինիս հատուկ կարգավիճակին: Ուստի, երբ 1919 թ. հոկտեմբերի 18-ին Փարիզում Միացյալ Հայաստանի պատվիրակությունն իր նիստին կրկին անդրադարձավ Անդրանիկի թեկնածությանը՝ նրա հավատարմագրի հարցին, ընդունվեց հետևյալ որոշումը. «Մենք՝ ներքստորագրողներս՝ Հայկական Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան և Խաղաղության կոնֆերանսի Հայկական Պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը, գեներալ Անդրանիկին նշանակում ենք Ամերիկա մեկնող հայկական զինվորական միախաչի (առաքելության – Ա. Ղ.) անդամ» [2, գ. 63, թ. 4]:

Հատկանշական է, որ Պողոս Նուբարը բավարարված էր՝ ի հակակշիռ Հանրապետությանը՝ իր ներկայացուցիչն ունենալ առաքելության կազմում: Թեև նա իր ուրախությունն էր հայտնել Անդրանիկին գրած նամակում՝ առ այն, որ զորավարը համաձայնություն էր տվել գեներալ Բագրատունու հետ Ամերիկա մեկնելու՝ որպես հայկական զինվորական առաքելության անդամ [2, գ. 63, թ. 5], ինքը՝ Անդրանիկը, խիստ վրդովվել էր այն փաստի վերաբերյալ, որ առաքելության ղեկավար էր նշանակվել գեներալ Բագրատունին և ոչ ինքը [3, գ. 64, թ. 16]:

Ռազմական առաքելության ստեղծումը հայության միջավայրում ամենուրեք ընդունվել էր գոհունակությամբ և մեծ հույսով: Այդ օրերին «Հայաստան» շաբաթաթերթը գրում էր. «Փարիզեն պիտի մեկնի ղեկ ի Ամերիկա հայ զինուորական առաքելությունը, կազմուած գոր. Բագրատունիէ և գոր. Անդրանիկէ, և որ պաշտօն ունի յանուն Ամբողջական Հայաստանի Պատվիրակութեան դիմումներ ընել ամերիկեան կառավարութեան ու Ճերսկոյոյին հայ բանակին զօրացման համար» [21, թիւ 9-10, էջ 89]: Անդրադառնալով արդեն ԱՄՆ մեկնած քաղաքացիական առաքելությանը՝ թերթը գրում էր հանձնախմբերից ակնկալվող միասնական աշխատանքների մասին. «Այս բոլոր պատուիրակները, իրաքանչիւրը աշխատութեան որոշ բաժին մը ունենալով հանդերձ, պիտի գործեն մշտական սերտ համաձայնութեամբ: Կատարուելիք դիմումները պիտի ձգտին ստանալ. Ճանաչումը Հայ Հանրապետութեան իր այժմեան սահմաններուն մեջ իբր անկախ կառավարութիւն; Ելեմտական փոխատուութիւն; Զինուորական օգնութիւն (ամէն ձեւով)» [21, թիւ 9-10, էջ 89]:

1919 թ. նոյեմբերի սկզբին Անդրանիկը, որն արդեն ամիսներ շարունակ Մեծ Բրիտանիայում էր՝ մասնավորապես Մանչեստերում և Լոնդոնում, ուր գրադված էր լայնածավալ հանգանակություն կազմակերպելու աշխատանքով, գալիս է Փարիզ՝ ԱՄՆ ուղևորվելու նպատակով: Այսպիսով, զորավար Բագրատունու գլխավորած

առաքելությունը, 1919 թ. նոյեմբերի 13-ին մեկնում է Փարիզից:

Ռազմական առաքելության գործունեության մեկնարկն ԱՄՆ-ում

Հ. Բագրատունու գլխավորած ռազմական առաքելությունը, որը Փարիզում հայկական երկու պատվիրակությունների համատեղ նիստում որոշվեց անվանել Միացյալ Նահանգներում Միացյալ Հայաստանի ռազմական ներկայացուցչություն, Նյու Յորք ժամանեց 1919 թ. նոյեմբերի 22-ին՝ ԱՄՆ-ում ՀՀ քաղաքացիական առաքելության ժամանումից մեկուկես ամիս անց: Առաքելության կազմում էին գեներալ Հ. Բագրատունին, նրա քարտուղար լեյտենանտ Միքսել Տեր-Պողոսյանը, որը ծառայելու էր՝ որպես առաքելության քարտուղար, գոր. Անդրանիկ Օզանյանը, վերջինիս թիկնապահ կապիտան Հայկ Բոնապարտյանը [11, էջ 494; 12, էջ 416-417; 19, էջ 1; 24, № 91; 20, թիւ 48, էջ1444]:

Զինվորական պատվիրակության անդամներին, ինչպես Քաջագունու առաքելությանն, ամերիկահայերն ընդունեցին բուռն խանդավառությամբ՝ ծածանվող դրոշներով, շեփոհներով, ծաղկեփնջերով, երջանիկ բազմությամբ, հեծյալ պատվո պահակախմբերով և ինքնաշարժերով... Բոլորի շուրթերին Անդրանիկի անունն էր: Առաքելության ժամանման մասին գրում էին բոլոր ամերիկահայ թերթերն ու ամսագրերը: Մեծ ուշադրություն հատկացրեցին առաքելության գործունեությանը քաղաքական չորս կուսակցությունների ամերիկահայ պաշտոնաթերթերը՝ «Ազգը», «Պահակը», «Հայրենիքը», «Երիտասարդ Հայաստանը»: Մի շարք պարբերականներ [22, էջ 1-2; 20, հ. XIX, էջ1436-1439], այդ թվում նաև անգլալեզու «The New Armenia»-ն, ներկայացնում էր զինվորական առաքելության անդամների՝ 38 տարեկան գեներալ Հ. Բագրատունու և 54 ամյա գեներալ Անդրանիկի կենսագրականներն ու նրանց անցած հերոսական ուղին [30, p.184.]

«The New Armenia» պարբերականն անդրադարձել էր նաև Անդրանիկի՝ նոյեմբերի 29-ին Նյու Յորքյան «Evening Post»-ին տված հարցազրույցին, որտեղ գորավարը նշել էր ռազմական առաքելության նպատակները. «*Ես գինվոր եմ: Ես թուրքի հետ կռվում եմ 1889-ից և ճանաչում եմ նրա հնարքները: Ես գիտեմ, որ նա միայն հարմար պահի է սպասում, որպեսզի կրկին հարձակվի իմ ժողովրդի վրա, և ես եկել եմ խնդրելու ամերիկյան կառավարությանը՝ մեզ տրամադրել ռազմական, ֆինանսական և տնտեսական օգնություն: Հայաստանն անօգնական է, եթե իր դաշնակիցները օգնության չգան: Մեզ պետք է զենք և բոլոր տեսակի զինամթերք: Մենք կցանկանայինք, որ ամերիկացի սպաներ ուղարկվեին հայկական գործերը ուսուցանելու*

համար, հատկապես տեխնիկական դորտներում, որտեղ մենք շատ բացեր ունենք»: [30, p.185]:

Չորավարն ակնկալում էր, որ դաշնակից տերությունները հետամուտ կլինեն՝ հայերին օգնելու իրենց խոստումներին:

Դեռ 1919 թ. աշնանը, Փարիզում որոշվել էր, որ ԱՄՆ ուղարկվող՝ քաղաքացիական և ռազմական պատվիրակություններն ունենալու էին ինքնուրույն կարգավիճակ, սակայն պետք է գործեին սերտորեն համաձայնեցված [10, էջ 609]: Ուստիև Բագրատունու պատվիրակության ժամանման պահից սկսած՝ վերջիններիս հետ գրեթե ամենուրեք հանդես էին գալիս քաղաքացիական հանձնախմբի անդամները: Պատվիրակությունները կարծես թե գործում էին համերաշխ և միասնական հանդիպումներ ունենում ամերիկահայ համայնքի հետ: Մամուլում՝ ներառյալ ամերիկյան թերթերն ու ամսագրերը՝ մասնավորապես «New York Times»-ը, «The Christian Science Monitor»-ը, «Evening Post»-ը, հրապարակվում էին գորավարների կոչերը, ճառերը, պարբերականներին տված հարցազրույցները. մանրամասն նկարագրվում էին այցելությունները գաղութի յուրաքանչյուր վայր [16-18; 20-26]: Ամերիկահայ մամուլը ներկայացնում էր գաղութում տիրող ցնծությունը՝ ծածանվող հայկական ու ամերիկյան դրոշների ներքո կազմակերպված. ավտոմոբիլներով և նվագախմբերով ուղեկցվող շքերթները, շքեղ ընդունելությունները, պատարագները, ճաշկերույթներն ամենուր էին:

Նշենք, սակայն, որ հայկական խնդիրների լուծումների հետաձգումն աստիճանաբար հանգեցնում է ամերիկահայ գաղութում ողբերգության հանգեցում և միասնականության թուլացմանը: Մամուլը գրում էր, որ ամերիկահայ գաղութի տարբեր խավերի և, հատկապես, կուսակցությունների միջև՝ մի պահ վերացած անհամաձայնությունները նորից ի հայտ էին եկել [18, թիւ 68, էջ 2]: Տարածայնությունները գլուխ են բարձացնում նաև առաքելությունների շրջանակներում:

Առաքելության հանձնարարականների իրականացման փորձերը 1919 թ. դեկտեմբերին

Ռազմական առաքելության վերոնշյալ ակտիվության հետ մեկտեղ խիստ անհրաժեշտ էր չմոռանալ և չշեղվել այն հիմնական նպատակից, ինչի համար ռազմական առաքելությունն ընդհանրապես գործուղվել էր ԱՄՆ: Գլխավոր հանձնարարականներից մեկը, որի շուրջ ձևավորվել էր հանձնախումբը, մնում էր անկատար: Այն է. 1919 թ. սեպտեմբերին ԱՄՆ սենատոր Ջ. Շ. Ուիլյամսի գլխավորությամբ՝ Հայաստանին օգնելու՝ այնտեղ խաղաղության պահպանմանն ուղղված բանաձև էր մշակվել և ներկայացվել Սենատին, որը պիտի քննարկվեր

Մենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում [Տե՛ս **6; 9**]: Այս բանաձևի ընդունումը չափազանց կարևոր էր, քանի որ Հայաստանի Հանրապետության համար ակնկալվող ռազմական օգնությունը տվյալ պահին նույնքան անհրաժեշտ էր, որքան Հայաստան ուղարկվող ամերիկյան հումանիտար օգնությունը: Ուստի՝ բանաձևի անցկացմանն աջակցելու և նպաստելու նպատակով անհրաժեշտ էր ԱՄՆ-ում ունենալ Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան գինվորական ներկայացուցիչ, որը կկարողանար ամերիկյան պետական այրերին ճիշտ ներկայացնել Հայաստանում տիրող իրական ռազմական պատկերը՝ բացատրել, թե զենքի և զինամթերքի ինչ կարիքներ ունեն հայկական բանակը, որքան լրացուցիչ ռազմական ուժ էր անհրաժեշտ Հայաստանում խաղաղություն և կարգ ու կանոն ապահովելու համար և թե ինչպես և որտեղ այդ ուժերը պետք է օգտագործվեին: Ամենակարևորը՝ ենթադրյալ օժանդակության չափերով «ահաբեկված» ԱՄՆ վարչակազմին անհրաժեշտ էր ռազմական մասնագետի հավաստիացում առ այն, որ Հայաստանում կարգ ու կանոն հաստատելու և օգնություն հասցնող ճանապարհները հսկելու համար անհրաժեշտ էր ընդամենը 10 000 - 20 000 զորք, և ոչ՝ 200 - 250 000:

Այդ նպատակով էլ Հ. Քաջազունու գլխավորությամբ ԱՄՆ մեկնող քաղաքացիական առաքելության կազմի մեջ անհրաժեշտ էր զինվորական կցորդ ընդգրկել, որը կապահովեր անհրաժեշտ զինվորական հանձնարարականների իրականացումը: Վերոշարադրյալից պարզ է, թե ինչպես կցորդի փոխարեն կազմվեց առանձին ռազմական հանձնախումբ, որը կոչված էր համալրելու քաղաքացիական պատվիրակությունը: Սակայն այն վերջինից անջատ և բավական ուշ՝ 1919 թ. նոյեմբերի վերջին է մեկնում ԱՄՆ, ուստիև հայ բարձրաստիճան գինվորականները հնարավորություն չեն ունենում անմիջականորեն ներգործություն ունենալ Ուիլյամսի բանաձևի անցկացման վրա, քանի որ վերջինիս վերաբերյալ Մենատի ենթահանձնաժողովի լուսմներին՝ սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 10-ը, ներկա չգտնվեցին: Լուսմներին հանդես գալու հնարավորություն ունեցան 1919 թ. հոկտեմբերի 9-ին ԱՄՆ ժամանած ՀՀ քաղաքացիական առաքելության անդամները՝ Հ. Քաջազունին և Գ. Փաստրմանյանը: Վերջինները լուսմների ժամանակ ներկայացրած իրենց խոսքում՝ ՀՀ-ին անհրաժեշտ տնտեսական և քաղաքական աջակցության հետ կապված, խիստ համառոտ անդրադարձել էին նաև ԱՄՆ-ի կողմից հնարավոր, սակայն Հայաստանի համար անհրաժեշտ և անհետաձգելի ռազմական օժանդակության կարևորությանը:

Ավելի քան մեկ ամիս ռազմական առաքելության անդամները, գտնվելով Միացյալ Նահանգներում, որևէ գործնական քայլ՝ իրենց առաքելության բուն նպատակի վերաբերյալ, չէին կարողանում իրականացնել: ԱՄՆ-ի վարչակազմի բարձրագույն ատյաններն այդքան քաջատեղյակ էին հայության հարցադիմումներին ու խնդրանքներին և կոնկրետ պատասխաններ ու, որն առավել կարևոր էր, երաշխիքներ չունենալով, չէին արձագանքում ռազմական հանձնախմբի հանդիպման դիմումներին: Ուստիև, որևէ տեղաշարժ ռազմական առաքելության ծրագրերում չէր նկատվում:

Բագրատունու առաքելության գործունեությունն իհարկե չէր սահմանափակվում միայն տեղի հայ համայնքի հետ հանդիպումներով: Հայոց պատվիրակությունների նկատմամբ ջերմ էր վերաբերմունքը ոչ միայն ամերիկահայության շրջանում: Հանդիպումներ էին կազմակերպվում նաև ամերիկացի հայտնի քաղաքական և հասարակական գործիչների և որոշ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնց ընթացքում առաքելությունների կողմից ներկայացվում էին հայության պահանջներն ու խնդրանքները: Բանաձևեր էին ընդունվում գրեթե յուրաքանչյուր հավաքի ընթացքում՝ ԱՄՆ պետական այրերին, այդ թվում նախագահ Վ. Վիլսոնին, սենատոր Հենրի Լոջին, ինչպեսև Կոնգրեսին և Մենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովին ներկայացնելու նպատակով՝ Հայաստանի կառավարությունը ճանաչելու և սենատոր Ջ. Շ. Ուիլյամսի առաջարկած բանաձևը հաստատելու պահանջներով [25, թիւ 11-12, էջ 428; 8, էջ 463; 15, c. 285]:

Անհատ պետական պաշտոնյաներից շատերը՝ նահանգապետ Ա. Քավլին Քուլիջը, Բոսթոնի քաղաքապետ Անդրյու Փիթրոզը, Հարվարդ համալսարանի ռեկտոր Աբբոտ Լորենս Լովելը և մի շարք այրոֆեսորներ, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի (ՀԱԿ) նախագահ Ջեյմս Ջերարդը, ինչպես նաև Ամերիկայի Եպիսկոպոսական եկեղեցին և այլք կարեկցանքով և համակրանքով էին վերաբերում հայ պատվիրակներին [8, էջ 463; 15, c. 285]: Նախագահի նախկին թեկնածուներ Չարլզ Է. Հյուզը (հանրապետական) և Ալթոն Բ. Փարքերը (դեմոկրատ) Բագրատունու և Անդրանիկին խոստացան, որ Հայաստանին օգնելու համար իրենք անձնապես կդիմեն նախագահ Վ. Վիլսոնին [8, էջ 461; 15, c. 283-284]: Սակայն՝ այս ամենի հետ մեկտեղ այնքան անտարբեր գտնվեցին ամերիկյան պաշտոնական իշխանությունները: Հայերը հուսախար էին: Ամերիկյան կառավարությունն ընդամառ չէր գնում հայկական երկու պատվիրակություններից և ոչ մեկի խնդրանքներին ու

փաստացի մերժում էր Հայաստանին տնտեսական և ռազմական օգնություն ապահովելը:

Վերջապես, 1919 թ. դեկտեմբերի վերջին, բազմաթիվ դիմումների արդյունքում, Անդրանիկին՝ հայկական ռազմական առաքելությունից առանձին հրավիրում են ԱՄՆ-ի ռազմական նախարարություն, որտեղ նա հանդիպում և 40 րոպե տևողությամբ գրույց է ունենում ԱՄՆ-ի ռազմական նախարար Նյութոն Դ. Բեյքերի հետ [12, էջ 418-419; 8, էջ 464; 15, c. 286]: Նշենք, որ մինչ Անդրանիկի հետ հանդիպումը նախարար Բեյքերն օրեր առաջ՝ առանձին ընդունել էր նաև գեներալ Բագրատունուն, ինչը խիստ զայրացրել էր Անդրանիկին [12, էջ 417-418; 10, էջ 630]:

Հատկանշական է այն, որ այդ առանձին հանդիպումը տեղի էր ունեցել հենց Բագրատունու նախաձեռնությամբ: Ընդունելության ժամանակ Բագրատունին ԱՄՆ-ի նախարարին ներկայացրել էր Հայոց ռազմական առաքելության հուշագիրը, որի տակ, սակայն, դրել էր միայն իր ստորագրությունը [12, էջ 418; 10, էջ 630]: Հուշագիրը ներկայացնում էր հայոց բանակի կառուցվածքը, հզորությունը, կարիքները և ներուժը: Բագրատունին նշել էր, որ ահրաժեշտ զենքի ու սարքավորումների առկայությամբ հայերը կարող էին իրենք ստանձնել ռուս-թուրքական նախկին սահմանից այն կողմ գտնվող իրենց տարածքների գրավումը: Սակայն ռազմական առաքելության նախագահը պնդեց, որ ամերիկահայերի կամավոր զորամասի մարզումը և Հայաստանի հրահանգիչների ու տեխնիկական խորհրդականների տրամադրումը Միացյալ Նահանգների համար լուրջ բեռ չէին լինի: Ն. Դ. Բեյքերը համակրանք հայտնեց, սակայն զգուշացրեց, որ որևէ գործողության համար կպահանջվեն պետական քարտուղարության արտոնությունը, գանձարանի կողմից վարկերի երկարացումը և Կոնգրեսի վավերացումը [8, էջ 464; 15, c. 285]: Նա խոստացավ հարցը ներկայացնել պետքարտուղար Ռ. Լանսինգին:

Ինչ վերաբերում է Անդրանիկի հետ հանդիպմանը, ապա զորավարն ԱՄՆ նախարարի հետ տեսակցության ընթացքում *«ընդարձակօրեն կր բացատրե՛ Հ. Հանրապետության քաղաքական կացությունը, ժողովուրդին աննախանձելի ու անտանելի վիճակը, սույն ու արհաւիրքը, Թուրքերու սպառնացող վտանգը, կր շեշտե՛ Ամերիկայի պարտականությունը եւ կր խնդրե՛ Ամերիկայի կառավարության անմիջական դրական օգնությունը, ինչպես՝ զէնք, ռազմամթերք եւ պաշարեղէն իբրեւ անհրաժեշտություն Հանրապետության գոյությունը պաշտպանելու համար»* [12, էջ 418]: Նախարար Բեյքերը, հետաքրքրությամբ լսելով զորավարին, *«կր հարցնե՛ ժողովուրդին տնտեսական վիճակին, որբերուն ու կարօտեալներուն կացությունը*

նկատմամբ եւ զանազան կարեկիռյոթեանց ու հարցերու լուսաբանություններ կր խնդրե՛»: [12, էջ 418]: Մանրամասն պատասխանելով նախարարի հարցումներին և լրացուցիչ տեղեկություններ տալով հայերի ռազմական հնարավորությունների, երկրի ճանապարհների, զաղթակալության ու որբերի վիճակի և այլ հարցերի մասին, Անդրանիկը մեկ անգամ ևս *«կր շեշտե՛ թե Հայ ազգը անհունապէս երախտապարտ պիտի մնայ Միացեալ Նահանգաց ամենաբարձր ու վեհանձն զգացումներուն համար եւ՛ կրխնդրե՛ կառավարութենէն որ Զօր. Բագրատունիի ըրած խնդրանքին զոհացում արուի, որում Մր.Պեքրոր կր պատասխանե՛ «Մեր լավագոյնը պիտի ընենք Հայ ազգին համար»»*: [12, էջ 419]:

Թեև հանդիպումը նախարարի հետ անցավ շատ ջերմ մթնոլորտում և, մասնավորապես, իր անձի նկատմամբ համակրական զգացումներով լի, Անդրանիկը հստակ տեսնում էր վերջինիս պաշտոնականությունը: Հանդիպումից կարճ ժամանակ անց զորավարը հասկացավ, որ այն ձևական բնույթ ուներ և որևէ հետագա գործողություն չէր ենթադրում, և որ Հայոց ռազմական առաքելությունը չի կարողանա որևէ արդյունքի հասնել:

Նախարարի հետ հանդիպումից հետո Անդրանիկն իր վրա դրված զինվորական առաքելությունը կատարած համարելով՝ անցնում է Պոդոս Նուբարի կողմից իրեն հանձնարարած՝ ամերիկահայության մեջ դրամահավաք անցկացնելու պարտականությանը [18, թիւ 81, էջ 1; 12, էջ 419-424, 8, էջ 467]:

Ռազմական առաքելության գործունեությունը 1920 թ.

Նոր՝ 1920 թվականի առաջին իսկ օրերը Բագրատունու համար սկսվում են հուսադրող. հունվարի 3-ին կայանալու էր նրա հանդիպումը պետքարտուղար Լանսինգի հետ, քանի որ ռազմական նախարար Բեյքերի հետ խոսակցության ամփոփագիրը՝ մինչև 1919 թ. վերջն իրոք՝ ինչպես խոստացել էր նախարարն ուղարկվել էր պետական քարտուղարություն: Լանսինգին այցի նպատակն էր երախտագիտություն հայտնել ամերիկյան մարդասիրական օգնության համար և վերահաստատել ռազմական նախարարության ներկայացրած կետերը: Սակայն Բագրատունու սպասումներն ապարդյուն էին: Պետքարտուղարը՝ չշեղվելով իրավաբանական իր նեղ համոզումից, պատասխանել էր Բագրատունուն, որ Միացյալ Նահանգները չէր կարող ռազմական օգնություն հատկացնել մի կառավարության, որը պաշտոնապես չէր ճանաչվել [8, էջ 464; 15, c. 286]:

Այսինքն՝ ռազմական առաքելության որևէ ջանք այլևս անիմաստ էր: Անդրանիկը՝ զայրացած հայոց Դատի նկատմամբ Ամերիկայի անտարբեր վերաբերմունքից, հրաժարվում էր

մասնակցել որևէ պետական ընդունելության [13, էջ 592]:

1920 թ. սկզբից Անդրանիկն իր հիմնական գործունեությունն ԱՄՆ-ում կապեց հենց Փրկության Հանգանակության կազմակերպման գործի հետ: Անդրանիկի կազմակերպած հանգանակությանը սատար էին կանգնել Ռամկավար կուսակցության ու Հայ Ընդհանուր Բարեգործական Միության մասնաճյուղերը: Չորավարը շրջում էր տարբեր քաղաքներով, նրա ներկայությունն ամենուրեք անօրինակ խանդավառություն էր առաջ բերում ամերիկահայության մեջ և հայ համայնքներին համախմբում ազգանվեր գործերի շուրջ: 1920 թ. հունվարի սկզբին Բոստոնից Անդրանիկը կոչ է հղում ամերիկահայությանը, որը լայն արձագանքն ունեցավ [10, էջ 616]: Թե ինչպես էին ամերիկահայերն ընդունել Չորավար Անդրանիկին, գրում էր իր հոդվածում «Զրիսչըն սայընս մոնիտրը» թերթի թղթակիցը. «Հայկական Գարիբալդին այժմ այս երկրում է: Գեներալ Անդրանիկը կանգնած է հայկական դյուցազնության ամենաբարձր կատարին: Հայերը նրան ամենուրեք գնծությամբ են դիմավորում: Նրանք ուշադրությամբ ու հիացմունքով լսում են նրա յուրաքանչյուր խոսքը: Եվ նա ասելու շատ բան ունի» [28, 2, գ. 96, թ. 9]: Հատկանշական է այն, որ թերթը նաև բերում էր Անդրանիկի արտասանած հիասթափության խոսքերը՝ «Մենք, հայերս, այլևս չենք կարող հավատալ դաշնակիցներին»:

Այսպիսով, Անդրանիկն այլևս չվատահերթվ դաշնակիցներին, ԱՄՆ-ում շարունակում էր իր կազմակերպած հանգանակության գործը, որն ընթանում էր սպասածից ավելի լավ: Սակայն այդ հաջողություններն իրենց հերթին հանգեցրեցին նոր հակասությունների ԱՄՆ-ում գտնվող հայկական ինչպես երկու պատգամավորությունների, այնպես էլ բուն ռազմական առաքելության պատվիրակների միջև: Բանն այն էր, որ ՀՅԴ-ն իր հերթին՝ 1920 թ. հունվարի 24-ից կազմակերպում է մեկ այլ հանգանակություն հայոց բանակին օգնելու նպատակով [11, էջ 511-512]: Հ. Քաջազունին, Գ. Փաստրմանյանը, գոր. Բագրատունին հանձն են առնում աջակցել այդ հանգանակությունը իրականացնելու գործում: Սկսվում է անհաշտ պայքար երկու պատվիրակությունների միջև:

Այդ տարաձայնությունների մասին դեռևս 1919 թ. դեկտեմբերի 18-ին ՀՀ վարչապետ Ա. Խատիսյանին գրում էր ԱՄՆ-ում Հայաստանի քաղաքացիական առաքելության ղեկավար Հ. Քաջազունին: Նամակում նա անդրադառնում էր նաև Անդրանիկի՝ Հայաստանի կառավարության դեմ ուղղված գործունեությանը: Այս ամենը չէր կարող չազդել հայերի նկատմամբ ամերիկյան կառավարության վերաբերմունքի վրա և կանխորոշել նրանց մերժումները:

Իսկ ինչ վերաբերում է հայոց խնդիրների նկատմամբ ամերիկյան իշխանությունների անտարբեր՝ փաստորեն մերժողական վերաբերմունքին, ապա այն ոչ միայն Անդրանիկի խոր վրդովմունքն ու վիրավորանքն էր առաջացրել էր, այլ նաև աստիճանաբար՝ 1920 թ-ի սկզբներից հանգեցնում էր Հայաստանի գլխին կախված վտանգի սաստկացմանը: Թուրքիան պատրաստվում էր հարձակվել Հայաստանի վրա: Հայաստանի շուրջ ծավալվող դեպքերը և ամերիկյան կառավարության ընդունած անտարբեր կեցվածքը՝ ստիպեցին Անդրանիկին 1920 թ. մարտին ԱՄՆ-ի կառավարությանն ուղերձ հղել՝ կոչ անելով հայացքը ուղղել Հայաստանի կողմը: Ուղերձում, որը՝ «Մենք հուսահատ ենք» խորագրով տպվել էր Նյու Յորքի «Ինդեպենդենտ» թերթի մարտի 27-ի համարում, Անդրանիկը գրում էր, որ թուրքերի ծրագիրը հայերի հիմնովին ոչնչացումն է, և որ միայն ԱՄՆ-ը կարող է դա կանխել [29, 27]: Սակայն 1920 թ. մայիսի 15-ին, Ջ. Շ. Ուիլյամսի՝ հայերին օգնելու և Հայաստանում խաղաղությունը պահպանելու համար Հայաստանի Հանրապետություն գործ ու գինամթերք ուղարկելու բանաձևը ներկայացվեց ԱՄՆ-ի Սենատի լրակազմ նիստին: Ամբողջությամբ ձևավորված և նախնական իմաստը կորցրած բանաձևը մերժվեց: Հաջորդիվ՝ մանդատի հարցի մերժումն էր:

Մինչ այդ, Անդրանիկն այն համոզմունքին էր, որ անգամ միայնակ, սակայն համախմբված ու միասնական ուժերով հայերը՝ թեկուզև սեփական կյանքի գնով, կարող էին լուծել Հայոց խնդիրները, սակայն անգամ ԱՄՆ-ում գտնվող հայկական երկու պատվիրակությունների միջև հակասությունները, որոնք փոքր-ինչ մեղմացել էին 1920 թվականի հունվար-փետրվարին, նորից շիկացան զարնանը: Ավելին, լուրջ հակասություններ առաջ եկան ռազմական պատգամավորության հենց ներսում: Հիմնական հարցը շարունակում էր մնալ Հայաստանի իշխանությունների նկատմամբ վերաբերմունքը: Չորավարն այդ օրերին ելույթներ էր ունենում և քննադատում Հայաստանի կառավարությանը, վերջինիս մեղադրում երկիրը ղեկավարելու անընդունակության մեջ: Կտրականապես մերժելով 1919 թ. մայիսի 28-ին Երևանում հայտարարված Միացյալ և Անկախ Հայաստանի ակտը, Անդրանիկը հրաժարվում է անգամ մասնակցել Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձի հանդիսություններին 1920 թվականի մայիսին:

Անդրանիկի նման պահվածքից դժգոհ՝ Հ. Քաջազունին բողոքում էր ՀՀ վարչապետ Համո Օհանջանյանին հունիսի 26-ին գրած իր նամակում առ այն, որ Չորավարը և իր թիկնապահ կապիտան Բոնապարտյանն ամերիկահայության տարբեր շրջաններում քարոզչություն

են անում Հայաստանի Հանրապետության և կառավարության դեմ դրանով իսկ վարկաբեկում պետությունը և խորացնում ամերիկահայ գաղթականության անվստահությունը հայրենի իշխանությունների նկատմամբ [10, էջ 629; 1, գ. 431, թ.114-115]:

1920 թ. մայիսից Անդրանիկը, փաստորեն, դադարեցրել էր իր մասնակցությունը գեներալ Բագրատունու պատվիրակությանը: Հունիսին գրած իր մի նամակում նա շեշտում էր, որ չնայած ինքը Բագրատունու հետ իրավասություններ ունի պատվիրակության մեջ, բայց իր իրավունքները միշտ անտեսվում են: Նա օրինակ է բերում, որ Բագրատունին միայն իր ստորագրությունը դնելով առաքելության հուշագրի տակ, այն ներկայացրել է ամերիկյան արտաքին գործոց նախարարություն՝ խնդրելով ռազմամթերք տրամադրել Հայաստանին, բայց այնպես էլ «մինչև օրս չի ստացել» որևէ պատասխան [10, էջ 630]: Նշենք, որ որևէ պատասխան չէր ստացել նաև Անդրանիկը՝ նախարար Ն. Բեյքերի հետ ունեցած իր հանդիպումից հետո:

Այսպիսով, զինվորական առաքելության պահանջներն անհրաժեշտ ուշադրության այդպես էլ չեն արժանանում ամերիկյան իշխանությունների կողմից: Իր նամակներից մեկում Անդրանիկը գրում էր, որ ԱՄՆ-ում սկսված նախագահական ընտրության պայքարն բոլոր քաղաքական ուժերին մղել է դեպի իրենց ներքին ազգային հետաքրքրությունները [4, գ. 65, թ.5; 10, էջ 630]: Այս նամակից երևում է, որ Անդրանիկն իր հույսն ամբողջությամբ կտրում է Միացյալ Նահանգներից: Նույն այդ ժամանակ, հունիսի սկզբին, Փարիզի Ազգային Պատվիրակությունը որոշեց Կիլիկիայի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով Անդրանիկին առաջարկել ԱՄՆ-ից վերադառնալ Եվրոպա՝ այնտեղից Կիլիկիա մեկնելու համար: 1920 թ. մայիսի 25-ին Անդրանիկը Նյու Յորքից մեկնեց Եվրոպա՝ Փարիզ գնալու համար [3, գ. 65, թ.1]:

Այդ մասին «Շողակաթ» թերթը գրում էր. «Յունիսի 25, Որքաթ առաւօտ ժամը 12-ին, ազգիս Հերոս Զօրավար Անդրանիկ եւ Հարիւրասպետ Պօնափարթեան Եւրոպա մեկնեցան: Իրենց մեկնումը անակնկալս տեղի ունեցաւ, առանց ինսցուելու որով, Նիւ Եորքի հայ գաղութը չկրցաւ, նաւամատոյց փոյթալու ու իրենց յարգանքը մատուցանելու մեծ հերոսին: Նախամատոյց ողջերթ մաղթելու փոյթացած էին՝ Ազգ. Առաջնորդարանի և Նիւ Եորքի Սբ. Լուսավորիչ եկեղեցու Հոգաբարձութեան, պատուաւոր ազգայիններէն նաեւ Ազգային Միութեան, Հ. Բ. Ը. Միութեան Բաղ. կազմակերպութեանց եւ հայ զինուորական խումբի կողմէ՝ ներկայացուցիչներ: Կառավարութեան կողմէ տրամադրուած շոքեմակոյքով, բաւական թիւով անհատներ գրեթէ երկու ժամ, ուղեկցեցան Զօրավարին շոգենաւին, եւ կեցցեներու, երգելու,

ծախերու եւ խանդավարութեանց մեջ, Զօրավարին շոգենաւր Բօջլի Ծօրճ հեռացաւ» [23, թիւ 17, էջ 3]:

Իսկ հաջորդ օրը, հունիսի 26-ին, Հ. Քաջազունին Ալ. Խատիսյանին գրած նամակում տեղեկացնում էր, որ Անդրանիկը մեկնել է Եվրոպա՝ առանց գորավար Բագրատունու հետ հանդիպելու կամ նրան տեղյակ պահելու [1, գ. 431, թ.118]: Ինքն՝ Անդրանիկը, իր այդ օրերի բռնած դիրքի մասին հետագայում գրում է Հովհ. Քաջազունուն. «Մեկ ցաւ կար սիրտս այրող, այդ ցաւը հայրենիքիս ցաւն էր: Ես կոտեսնէի Արարատի գագաթին վրայ կուտակված սև ու մոռայ ամպերը...» [7, էջ 190]:

Անդրանիկի մեկնումից հետո Հ. Բագրատունին մնում է ԱՄՆ-ում ևս մեկուկես ամիս: 1920թ. մայիսին նա դեռ շարունակում էր հանգանակությունների հետ կապված գործունեությունը: Մայիսի 16-ին Բոստոնի հայ համայնքը Արլինգտոնի թատրոնում հանրահավաք է անցկացրել Հ. Բագրատունու և Հանրապետությունից նոր ժամանած եպիսկոպոս Խորենի մասնակցությամբ, որի ընթացքում նախաձեռնվել էր դրամահավաք բանակի համար [14, c. 379]: Բացի դա՝ մայիսի 22-ին, արձագանքելով հայկական մանդատի վերաբերյալ Մենատի մոտալուտ լուսմներին և փորձելով հստակեցնել սահմանազատման խնդիրը, գեներալ Բագրատունին Վաշինգտոնի վարչակազմին ներկայացրեց "Էրզրումի նահանգը, Տրապիզոնի և Խարբերդի շրջանները հայկական պետության մեջ ներառելու մասին" խորագրով հուշագիր: Այդ փաստաթղթում ռազմական առաքելության ղեկավարը հակադրվում էր դաշնակիցների՝ նոր ազգային կազմավորման տարածքը կրճատելու միտմանը: Նա մանրամասն լուսաբանել էր նշված տարածքների տրանսպորտային և տնտեսական, ռազմական և ռազմավարական, մշակութային նշանակությունը, ներկայացրել էր նոր պետության ժողովրդագրական բնույթը, շարադրել հայրենադարձության կանխատեսումները [1, գ. 556, թ. 290-299; 14, c. 382-385]:

Այդուհանդերձ, 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի Մենատի կողմից Հայաստանի մանդատի մերժումից հետո ակնհայտ էր, որ Հայոց ռազմական առաքելությունն այլևս անելիք չունեի ԱՄՆ-ում:

Ինչպես գրում էր «Շողակաթ» պարբերականը՝ «Յուլիս 10-11 – Զօր. Բագրատունի, հայ Հանրապետութեան եւ Հայ Ազգային Պատուրակաւնութեան ներկայացուցիչները, ինչպես նաեւ Վեհափառ Կաթողիկոսի յիսգոր նուիրակ Գեղ Տ. Խորէն Արքեպիսկոպոս ու իրենց յետեորդները, որոնք ժամանակէ մը ի վեր Ամերիկա կը գտնուէն, յաջորդաբար մեկնեցան, իւրաքաչիւրին մեկնման արթիվ ազգային պաշտոնական մարմինները

ողջերթի համար նախնախորհրդի փոխարին ու իրենց յարգանքները մատուցին յարգելի ճամբորդներուն: Մենք ալ բարի չանապարհ եւ յաջողութիւն կը մատթոյնք իրենց» [23, № 18, էջ 3]:

Եզրակացություններ

1. 1919 թ. ամռանը հումանիտար օգնություն խնդրելու նպատակով Եվրոպա ժամանած՝ ՀՀ կառավարության կողմից ստեղծված քաղաքացիական առաքելությունը, առաձնակի հաջողությունների չհասնելով տեղում, պատրաստվում է դիմել ամերիկյան կառավարությանը՝ հենց ԱՄՆ-ում ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական և ռազմական բնույթի օժանդակություն ստանալու խնդրանքով: Այդ նպատակով Փարիզում հայկական երկու պատվիրակությունների կողմից կազմավորվում է ռազմական առաքելություն ՀՀ բանակի գեներալ Հ. Բագրատունու գլխավորությամբ: Որպես Ազգային պատվիրակության հատուկ ներկայացուցիչ նշված հանձնախմբի մեջ ընգրկվում է զորավար Անդրանիկը:

2. Միացյալ Հայաստանի անունից ԱՄՆ մեկնած բարձրաստիճան զինվորականները պետք է ճիշտ ներկայացնեին ամերիկյան պետական այրերին Հայաստանում տիրող իրական ռազմական պատկերը՝ բացատրելին, թե զենքի և զինամթերքի ինչ կարիքներ ունեւ հայկական բանակը, որքան լրացուցիչ ռազմական ուժ էր անհրաժեշտ Հայաստանում խաղաղություն և կարգ ու կանոն ապահովելու համար և թե ինչպես և որտեղ այդ ուժերը պետք է օգտագործվեին: Ռազմական առաքելությունն ամեն կերպ պետք է աջակցեր և նպաստեր 1919 թ. սեպտեմբերին -ԱՄՆ սենատոր Ջ. Շ. Ուիլյամսի գլխավորությամբ Սենատին ներկայացրած՝ Հայաստանին օգնելու, այնտեղ խաղաղության պահպանման համար գորք ու զինամթերք ուղարկելու վերաբերյալ բանաձի անցկացմանը:

3. 1919 թ. նոյեմբերի 22-ին առաքելությունը ժամանեց Նյու Յորք, սակայն ավելի քան մեկ ամիս որևէ գործնական քայլ չկարողացավ իրականացնել: ԱՄՆ-ի վարչակազմի բարձրագույն ատյանները չէին արձագանքում հանձնախմբի դիմումներին: Երբ, վերջապես, 1919 թ. դեկտեմբերի վերջին և 1920 թ. հունվարի սկզբին հայ պատվիրակներն ընդունվեցին ռազմական նախարար Ն. Բեյքերի և պետքարտուղար Ռ. Լանսինգի կողմից, հուսադրող որևէ պատասխան չտրվեց և ավելին՝ բացահայտ ասվեց, որ ԱՄՆ-ն չէր կարող ռազմական օգնություն հատկացնել մի կառավարության, որը պաշտոնապես ճանաչված չէր:

4. Ավելի քան կես տարի մնալով ԱՄՆ-ում ռազմական պատվիրակությունն որևէ արդյունքի չհասավ: Հանձնախմբի առաքելությունը հատկապես անիմաստ դարձավ, երբ

ԱՄՆ-ի Սենատի կողմից հաջորդաբար մերժվեցին Ջ. Շ. Ուիլյամսի բանաձևը (15.05.1920) և նախագահ Վ.Վիլսոնի Հայաստանի մանդատի ստանձման առաջարկը (01.06.1920):

5. Առաքելության անհաջողության պատճառն ամենին վերջինիս աշխատանքում անշուշտ առկա թերություններն ու պատվիրակների միջև եղած տարաձայնությունները չէին: Այն պայմանավորված էր նրանով, որ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը ռազմական օգնություն ցուցաբերելու հարցը, որն արդիական էր 1919 թ. առաջին կեսին, աշնանից սկսած այլևս չէր մտահոգում ամերիկյան դիվանագետներին, իսկ դեկտեմբերին արդեն ամբողջությամբ փակ էր: Բանն այն է, որ 1919 թ. նոյեմբերին ԱՄՆ-ի Սենատը մերժել էր Վերսալի հաշտության պայմանագիրը՝ ուստիև Ազգերի լիգայի կանոնադրությունն ու մանդատային համակարգը: ԱՄՆ-ի վարչակազմը վերադառնում էր իր ավանդական՝ մեկուսացման քաղաքականությանը և հայկական խնդիրներն նրա քաղաքական օրակարգից դուրս էին:

Օգտագործված գրականության ցանկ Արխիվ

1. Հայաստանի ազգային արխիվ (<ԱԱ>)
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 43-44:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 55-60:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, մաս 1, թթ. 218-219:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 114-115:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 556, թ. 290-299:
2. ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 63, թ. 3:
ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 63, թ. 4:
ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 63, թ. 5:
ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 65, թ. 2:
ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 96, թ. 9:
ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 431, թ. 118:
3. ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 64, թ. 16:
ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 65, թ. 1:
4. ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 65, թ. 5:

Տպագիր սկզբնաղբյուրներ

5. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2010, էջ 167:
6. Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R., Washington, 1919.

Գրականություն

7. Զորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրությունը, 1914-1917, Պոսթոն, 1924, Տպարան «Պայքար», 200 էջ:
8. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն 1919-1920, հ. II, Երևան, 2014, 708+8 էջ:
9. Խաղաղության պահպանումը Հայաստանում. լուսմներ ԱՄՆ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (27. 09. 1919 - 10. 10. 1919), Արմենու.հի Դամբարյանի

- աշխատասիրությամբ, Երևան, 2022, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 356 էջ:
10. **Սիմոնյան Հ.**, Ամդրանիկի ժամանակը, Երկու գրքով, գիրք - Բ, Երևան, 1996, «Կասիա», 831 էջ:
 11. **Տոնապետեան Գ.**, Հ. Յ. Դաշնակցությունը Հիւսիսային Ամերիկայի մէջ (1910 - 1923), Բ. հատոր, Հայրենիք հաստատություն, Պոսթոն, 1995, 511 էջ:
 12. **Ճիգմեճեան Մ.**, Պաթմություն Ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, Ֆրեզնո, 1930, տպագր. «Նոր Օր», 512 էջ:
 13. **Չելեպեան Ա.**, Չորավար Անդրանիկ եւ հայ յեղափոխական շարժումը, Լոս Անճելըս, 1984, ABRIL Printing Company, 745 էջ:
 14. **Махмуриян Г. Г.**, Армения в политике США 1917-1923 гг., Ереван, 2018, Институт Истории НАН РА, 608 с.
 15. **Ованнисян Р. Г.**, Международные отношения Республики Армения 1918-1920, Ереван, 2007, Տիգրան Մեծ հրատ., 890 с.
- Մամուլ**
16. **Արագած**, 23.11.1919; 14.12.191:
 17. **Արմենիա**, 17.12.1919:
 18. **Երիտասարդ Հայաստան**, 24.12.1919; 27.12.1919; 11.02.1920:
 19. **Երկիր**, 14.10.1919:
 20. **Կոչնակ Հայաստանի**, 25.10.1919; 01.11.1919; 29.11.1919:
 21. **Հայաստան**, 25.10.1919:
 22. **Հայրենիք**, 04.12.1919; 23.12.1919:
 23. **Ճողակաթ**, 27.12.1919; 17.07.1920; 04.11.1920:
 24. **Պահակ**, 25.11.1919; 16.12.1919:
 25. **Վերածնություն**, 1919, №11-12:
 26. **Տարոս** 1919, № 41-52:
 27. **Ararat**, 1971, Summer.
 28. **The Christian Science Monitor**, 31.03.1919.
 29. **The Independent**, 27.03.1920.
 30. **The New Armenia**, December, 1919, № 12.
- Հոդվածներ**
31. **Ղամբարյան Ա.**, Հ. Քաջագունունու հաղորդումը ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (Հոկտեմբեր, 1919 թ.), Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, № 3, էջ 254 -261:
 32. **Ղամբարյան Ա.**, Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքացիական առաքելության գործունեությունն ԱՄՆ (1919թ. վերջ - 1920թ. սկիզբ), Պատմաբանասիրական հանդես, 2021թ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021թ., № 3, էջ 134-149.
 33. **Վիրաբյան Վ.**, Հայկական բանակի համար զենք-զինամթերքի հայթայթումը 1918-1920 թթ., «Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես», Եր, 2019, № 2, էջ 98:

*Տժանա/Հանձնվել է՝ 02.12.2022
 Рецензирована/Գրախոսվել է՝ 08.12.2022
 Принята/Ընդունվել է՝ 10.12.2022*